

1.3. Գներ և սակագներ

2000թ. փետրվարին գների փոփոխությունները, ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների.

(տոկոսներով նախորդ ամսվա նկատմամբ)

	Սպառողական գների ինդեքս ¹⁾	Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս ²⁾	Գների ինդեքսը կապիտալ շինարարությունում ³⁾	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս ⁴⁾	Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս ⁵⁾	Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս ⁶⁾
Հունվար	101.9	100.1	99.2	97.9	98.9	101.2
Փետրվար	100.1	100.0	100.0	102.1	96.8	99.5
2000թ. փետրվարը 1999թ. դեկտեմբերի նկատմամբ	102.0	100.9*)	99.2	100.0	96.3*)	99.1*)
2000թ. հունվար-փետրվարը 1999թ. հունվար-փետրվարի նկատմամբ	100.0	104.5	100.3	99.0	90.7	94.9

*) 2000թ. փետրվարի և 1999թ. դեկտեմբերի փաստացի գներով հաշված:

¹⁾ Ըստ գործող մեթոդաբանության, 77-ում գների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ը ընկած ժամանակահատվածում երևան քաղաքում և հանրապետության 9 մարզերում (բացի Արարատի մարզից) 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:

²⁾ Գների դիտարկումը կատարվում է 111 արդյունաբերական բազային կազմակերպություններում՝ 283 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով:

³⁾ Ըստ 77 քաղաքաշինության նախարարության տվյալների:

⁴⁾ Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնառաքումների դիտարկված սակագների հիման վրա:

⁵⁾ Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքների իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:

⁶⁾ Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման գների և ծավալների հետազոտման տվյալների:


Սպառողական գներ. Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում 2000թ. փետրվարին նախորդ ամսվա համեմատ արձանագրվել է աննշան գնաճ և պահպանվել է գների համեմատաբար կայուն մակարդակ:

2000թ. փետրվարին նախորդ ամսվա համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 100,1 տոկոս, այդ թվում պարենային ապրանքների՝ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) 100,3 տոկոս, ոչ պարենային ապրանքների՝ 99,3 տոկոս, իսկ ծառայությունների գծով պահպանվել է սակագների նախորդ ամսվա մակարդակը:

Սպառողական գների ինդեքսը փետրվարին 1999թ. դեկտեմբերի համեմատ կազմել է 102,0 տոկոս, այդ թվում պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 103,0 տոկոս, ոչ պարենային ապրանքների՝ 99,1 տոկոս, իսկ ծառայությունների սակագների՝ 100,2 տոկոս:

Ընթացիկ տարվա փետրվարին 1999թ. փետրվարի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 100,1 տոկոս, այդ թվում պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 99,1 տոկոս, ոչ պարենային ապրանքների՝ 101,6 տոկոս, իսկ ծառայությունների սակագների՝ 101,1 տոկոս, իսկ հունվար-փետրվարին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ՝ համապատասխանաբար 100,0 տոկոս, 98,9, 102,0 և 101,6 տոկոս:

ՀՀ սպառողական շուկայում պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2000թ. հունվար-փետրվարին տոկոսներով (նախորդ ամիսը = 100)



2000թ. փետրվարին նախորդ ամսվա համեմատ թե՛ սպառողական, թե՛ արտարժույթի շուկայում արձանագրվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի աննշան աճ կազմելով համապատասխանաբար 0,1 և 0,2 տոկոս: Փետրվարին 1999թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների 2,0 տոկոս գնաճի պայմաններում գրանցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 0,7 տոկոս հավելում: 1999թ. համապատասխան ժամանակահատվածում նշված ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 4,0 և 4,9 տոկոս:

Պարենային ապրանքների գներ: Պարենային ապրանքների շուկայում 2000թ. հունվար-փետրվարին արձանագրվել է 3,1 տոկոս գնաճ՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 2,4 տոկոս գնաճի դիմաց:

Չնայած 2000թ. փետրվարին պարենային ապրանքների գների ընդհանուր մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ, դիտարկված որոշ պարենային ապրանքների սեզոնայնությամբ, ինչպես նաև արտերկրներից դրանց ներմուծման ծավալների փոփոխությամբ պայմանավորված, գներն ունեցել են թե՛ աճման, թե՛ նվազման միտում: Ընթացիկ ամսում բանջարեղենի ու կարտոֆիլի ապրանքախմբում արձանագրվել է 8,6 տոկոս գնաճ՝ կապված գլուխ սոխի (17,8 տոկոս), լոլիկի (16,8), գազարի (13,3), կաղամբի (13,2), ճակնդեղի (10,1), կարտոֆիլի (6,1), վարունգի (4,9 տոկոս) գնաճի հետ: Դիտարկված բնակավայրերից 8-ում բանջարեղենի գներն աճել են 2,8-30,6 տոկոսով (գնաճի ամենաբարձր տոկոսը գրանցվել է Թալիհում), իսկ Վաղարշապատում և Եղեգնաձորում արձանագրվել է համապատասխանաբար 1,3 և 0,3 տոկոս գների նվազում:

Չկնամթերքի ապրանքախմբում, ի տարբերություն նախորդ ամսվա, արձանագրվել է 1,8 տոկոս գնաճ, ինչը թարմ ձկան (սիգ) 1,9 տոկոս գնաճի արդյունք է:

Մրգի ապրանքախմբում գրանցվել է գների 1,2 տոկոս նվազում: Հանրապետությունում դիտարկված բնակավայրերից 7-ում 2000թ. փետրվարին նախորդ ամսվա համեմատ մրգի գնաճը կազմել է 0,4-6,6 տոկոս (համեմատաբար բարձր աճ գրանցվել է Հրազդանում, Չարենցավանում), իսկ հանրապետության խոշոր քաղաքներում, ինչպիսիք են Գյումրին, Վանաձորը և Երևանը, գրանցվել է մրգի գնի 16,1-0,3 տոկոս նվազում: Նշված ժամանակահատվածում նվազել են խնձորի (5,4 տոկոս), խաղողի (3,0), կիտրոնի (1,9), տանձի (0,2 տոկոս) գները: Միաժամանակ, սեզոնայնությամբ և ներմուծման

ծավալներով պայմանավորված, գնաճ է գրանցվել մանդարինի (6,7 տոկոս), նարնջի (3,2 տոկոս) գծով:

2000թ. փետրվարին նախորդ ամսվա համեմատ 2,2-0,2 տոկոսով նվազել են շաքարավազի, սուրճի, թեյի, կակաոյի, կենդանական և բուսական յուղի, հացամթերքի, հրուշակեղենի, կաթնամթերքի, ոչ ոգելից խմիչքի գները: Չվի գնի 9.9 տոկոս նվազումը, թերևս, պայմանավորված է հանրապետությունում ձվի արտադրության 35.6 տոկոս հավելաճով (հունվարի 19.4 մլն. հատ ձվի փոխարեն փետրվարին արտադրվել է 26.3 մլն. հատ ձու):

2000թ. հունվարին արձանագրված մսամթերքի գնաճին փետրվարին հաջորդել է գների նվազում՝ կազմելով 0,7 տոկոս, ինչը բացատրվում է խոզի (1,5 տոկոս), թռչնի (1,1), տավարի (0,5), ոչխարի (0,4 տոկոս) մսի գների նվազմամբ: Դիտարկված բնակավայրերից 5-ում մսամթերքի գնաճը կազմել է 0,3-1,2 տոկոս (գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Վաղարշապատում, Հրազդանում, Չարենցավանում), իսկ մյուս 5-ում գրանցվել է գների 3,1-0,7 տոկոս նվազում: 1999թ. դեկտեմբերի նկատմամբ 2000թ. փետրվարին մսամթերքի գների ընդհանուր նվազումը հանրապետությունում կազմել է 0,1 տոկոս:

Ոգելից խմիչքի և ծխախոտի ապրանքախմբում 2000թ. փետրվարին արձանագրվել է գնաճ՝ կազմելով 1,6 տոկոս, ընդ որում, եթե ոգելից խմիչքի գները նվազել են 0,6 տոկոսով, ապա ծխախոտի գծով գրանցվել է 1,9 տոկոս գնաճ: Փետրվարին 1999թ. դեկտեմբերի համեմատ ծխախոտի ընդհանուր գնաճը կազմել է 2,9 տոկոս:

Գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի

(տոկոսներով)

	2000 թ վ ա կ ա ն ի			2000թ. հունվար-փետրվար 1999թ. հունվար-փետրվարի նկատմամբ
	հունվարը 1999թ.	փետրվարը դեկտեմբեր նկատմամբ	փետրվարը 2000թ. հունվարի նկատմամբ	
	Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	102.7	103.0	
Պարենային ապրանքներ	103.0	103.1	100.0	94.4
հացամթերք	100.2	99.8	99.6	97.2
մսամթերք	100.6	99.9	99.3	95.3
ձկնամթերք	94.2	95.9	101.8	94.9
կաթնամթերք	100.0	99.8	99.8	93.7
ձու	107.6	96.9	90.1	96.9
կենդանական և բուսական յուղ	99.9	98.9	99.0	90.7
միրգ	121.3	119.8	98.8	83.9
բանջարեղեն և կարտոֆիլ	122.7	133.3	108.6	92.1
շաքարավազ	97.2	95.1	97.8	85.6
սուրճ, թեյ, կակաո	99.7	98.3	98.7	95.7
հրուշակեղեն	100.0	99.6	99.6	97.2
ոչ ոգելից խմիչք	99.6	99.3	99.8	98.5
Ոգելից խմիչք և ծխախոտ	101.0	102.6	101.6	144.4

Ոչ պարենային ապրանքների գներ: Ոչ պարենային ապրանքների շուկայում 2000թ. փետրվարին նախորդ ամսվա համեմատ արձանագրված գների 0,7 նվազումը բացատրվում է կոշկեղենի, ոսկերչական ապրանքների, հագուստի և կտորեղենի, գեղահարդարման, մշակույթի ապրանքների, տեքստիլեղենի, գորգեղենի, խոհանոցային սպասքի, լվացամիջոցների, շինանյութերի, գրենական պիտույքների, անձնապիտո ապրանքների գների 1,4-0,1 տոկոս նվազմամբ: Վառելիքի ապրանքախմբում գրանցվել է 1,0 տոկոս գնաճ, իսկ կահույքի,

կենցաղային էլեկտրաապրանքների, դեղամիջոցների և այգեգործական ապրանքների գները մնացել են նախորդ ամսվա մակարդակին:

2000թ. փետրվարին նախորդ ամսվա համեմատ բենզինի միջին հանրապետական գինն աճել է 0,5 տոկոսով, իսկ դիզելային վառելիքի գծով դիտվել է մանրածախ գնի 2,6 տոկոս նվազում: Փետրվարին 1999թ. դեկտեմբերի համեմատ բենզինի ընդհանուր գնաճը կազմել է 1,5 տոկոս, իսկ դիզելային վառելիքի գծով գրանցվել է 4,1 տոկոս նվազում:

Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները

(տոկոսներով)

	2000 թվական			2000թ. հունվար-փետրվարը 1999թ. հունվար-փետրվարի նկատմամբ
	հունվարը 1999թ. դեկտեմբերի նկատմամբ	փետրվարը	փետրվարը 2000թ. հունվարի նկատմամբ	
	Ոչ պարենային ապրանքներ այդ թվում՝	99.7	99.1	
հագուստ և կտորեղեն	99.5	98.6	99.0	96.5
վառելիք	100.5	101.5	101.0	112.5
կահույք	99.1	99.1	100.0	99.1
գորգեղեն	99.8	99.6	99.8	98.0
տեքստիլեղեն	99.0	98.5	99.5	92.7
խոհանոցային սպասք	99.7	99.3	99.6	97.5
լվացամիջոցներ	100.7	100.6	99.8	96.0
շինանյութեր	99.9	99.8	99.9	97.1
այգեգործական ապրանքներ	100.0	100.0	100.0	99.4
դեղամիջոցներ	99.2	99.2	100.0	89.8
մշակույթի ապրանքներ	99.6	99.0	99.4	93.9
գրենական պիտույքներ	98.6	98.5	99.9	86.6
գեղահարդարման ապրանքներ	98.8	98.3	99.4	95.5
ոսկերչական ապրանքներ	101.4	100.3	98.9	92.6
անձնապիտո ապրանքներ	99.0	98.9	99.9	96.1

Ծառայությունների սակագներ: 2000թ. փետրվարին նախորդ ամսվա համեմատ ծառայությունների սակագների անփոփոխ մակարդակի պայմաններում 0,3-2,5 տոկոսով աճել են կրթության, հանգստի, կապի և մշակույթի ծառայությունների սակագները: Հանրային սննդի և տրանսպորտի ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 0,1 տոկոս նվազում, իսկ կենցաղային, բնակարանային-կոմունալ, առողջապահության, իրավական ու բանկային ծառայությունների սակագները մնացել են նախորդ ամսվա մակարդակին:

Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները.

(տոկոսներով)

	2000 թվական			2000թ. հունվար-փետրվարը 1999թ. հունվար-փետրվարի նկատմամբ
	հունվարը 1999թ. դեկտեմբերի նկատմամբ	փետրվարը	փետրվարը 2000թ. հունվարի նկատմամբ	
	1 առայություններ, ընդամենը այդ թվում՝	100.2	100.2	
կենցաղային	100.3	100.3	100.0	100.6
բնակարանային-կոմունալ	100.0	100.0	100.0	100.0
առողջապահության	102.1	102.1	100.0	104.5
տրանսպորտի	99.4	99.3	99.9	99.1
կապի	99.1	99.9	100.8	98.9
մշակույթի	96.9	99.3	102.5	109.2

	2000 թվական			2000թ. հունվար-փետրվարը 1999թ. հունվար-փետրվարի նկատմամբ
	հունվարը	փետրվարը	փետրվարը	
	1999թ. դեկտեմբերի նկատմամբ	2000թ. հունվարի նկատմամբ	2000թ. հունվարի նկատմամբ	
կրթության	100.2	100.5	100.3	121.2
հանգստի	100.5	101.0	100.5	95.1
հանրային սննդի	101.6	101.5	99.9	100.7
իրավական և բանկային	100.0	100.0	100.0	100.0

Սպառողական զների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները: Դիտարկված բնակավայրերից 5-ում 2000թ. փետրվարին նախորդ ամսվա համեմատ սպառողական զներն աճել են 0,1-1,1 տոկոսով (համեմատաբար բարձր աճ գրանցվել է Դիլիջանում), Մարտունիում պահպանվել է սպառողական զների նախորդ ամսվա մակարդակը, իսկ Գյումրիում, Վաղարշապատում, Եղեգնաձորում և Վանաձորում գրանցվել է զների 0,6-0,1 տոկոս նվազում:

Պարենային ապրանքների գծով ընթացիկ ամսում դիտարկված բնակավայրերից 5-ում արձանագրվել է 0,1-1,9 տոկոս գնաճ (համեմատաբար բարձր գնաճ գրանցվել է Թալինում): Գյումրիում, Վանաձորում, Վաղարշապատում և Եղեգնաձորում գրանցվել է զների 1,1-0,7 տոկոս նվազում, իսկ Կապանում պահպանվել է պարենային ապրանքների զների նախորդ ամսվա մակարդակը:

Հանրապետության հետազոտված բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները՝ 2000թ. փետրվարի 29-ի դրությամբ

	Միս տավարի	Պանիր	Կարագ	Բուսական յուղ, լիտր	Չուր, տասնյակի համար	Շաքարավազ	Կարտոֆիլ	Գլուխ սոխ	Կաղամբ	Խնձոր
ԴԴ, ընդամենը այդ թվում՝	1052	1288	1440	587	396	204	115	128	68	261
Երևան	1067	1354	1429	602	375	202	122	118	65	278
Գյումրի	1025	1200	1417	527	450	220	87	157	83	250
Վանաձոր	950	1200	1500	560	350	198	90	130	45	183
Վաղարշապատ	1100	1300	1350	520	382	190	120	110	70	300
Թալին	1100	1200	1500	600	450	200	150	150	130	200
Դիլիջան	1000	1200	1450	600	500	210	135	150	80	200
Հրազդան, Չարենցավան	1100	1200	1400	620	400	210	120	130	80	250
Եղեգնաձոր	1000	1000	1450	610	450	200	110	110	100	250
Մարտունի	900	1200	1500	600	480	220	70	180	40	280
Կապան	1160	1060	1640	520	480	222	128	130	74	220

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1կգ-ի, ձվի՝ տասնյակի հաշվարկով) 2000թ. փետրվարի 29-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 5539 դրամ, ինչը 3,6 տոկոսով ցածր է նույնամյակի ապրանքատեսակների հունվարի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքից (5746 դրամ): Ընթացիկ ամսում հունվարի նկատմամբ նշված պարենային ապրանքների մեծ մասի միջին գները նվազել են 14,3-0,6 տոկոսով: Նշված ժամանակահատվածում աճել է միայն գլուխ սոխի գինը, իսկ կարտոֆիլի և կաղամբի միջին գները մնացել են նախորդ ամսվա մակարդակին: Դիտարկված բնակավայրերում վերոհիշյալ ապրանքների ձեռքբերման ամենացածր արժեքն արձանագրվել է Վանաձորում (5206 դրամ), իսկ ամենաբարձրը՝

Թալիճում (5680 դրամ):

Ընթացիկ տարվա փետրվարին նախորդ ամսվա համեմատ հանրապետությունում դիտարկված բնակավայրերից 8-ում գրանցվել է ոչ պարենային ապրանքների գների 1,0--0,2 տոկոս նվազում (նվազման համեմատաբար բարձր տոկոս գրանցվել է Երևանում), իսկ Դիլիջանում և Վանաձորում գնաճ՝ համապատասխանաբար 0,4 և 0,2 տոկոս:

Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2000թ. փետրվարին հետազոտված բնակավայրերից 4-ում արձանագրվել է սակագների 0,2-0,5 տոկոս հավելած (համեմատաբար բարձր հավելած գրանցվել է Եղեգնաձորում): Թալիճում և Կապանում սակագները նվազել են 0,2 տոկոսով, իսկ մյուս 4 բնակավայրերում պահպանվել է սակագների նախորդ ամսվա մակարդակը:

Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը 2000թ. փետրվարին 1999թ. դեկտեմբերի համեմատ, ըստ դիտարկված բնակավայրերի և ապրանքխմբերի.

(տոկոսներով)

	Սպառողական գների ինդեքսը	այդ թվում՝				բնակչությանը մատուցված ծառայությունների
		սպառողական ապրանքների	դրանցից			
			պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	պարենային ապրանքների	ոչ պարենային ապրանքների	
ԳՅ, ընդամենը	102.0	102.3	103.0	103.1	99.1	100.2
<i>այդ թվում՝</i>						
Երևան	102.5	102.8	103.7	103.8	98.8	100.5
Գյումրի	101.2	101.5	101.8	102.2	99.9	99.7
Վանաձոր	102.2	102.5	103.1	103.3	99.9	100.4
Վաղարշապատ	100.9	101.0	101.3	101.3	99.6	100.0
Թալիճ	102.3	102.8	103.7	103.8	98.7	99.6
Դիլիջան	101.2	101.5	101.7	102.6	100.2	99.3
Հրազդան, Չարենցավան	100.3	100.4	101.0	100.1	97.9	99.6
Եղեգնաձոր	104.4	104.9	106.2	107.6	99.1	100.7
Մարտունի	100.7	100.8	101.2	101.5	99.4	99.9
Կապան	102.0	102.4	102.7	102.6	101.2	99.4

Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս: 2000թ. փետրվարին 1999թ. դեկտեմբերի նկատմամբ արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի գնաճը կազմել է 0,9 տոկոս, նախորդ տարվա համապատասխան ժամակահատվածի 2,8 տոկոսի դիմաց:

Ընթացիկ ամսում նախորդ ամսվա համեմատ արդյունաբերական ձեռնարկությունների թողարկած արտադրանքի գների անփոփոխ մակարդակի պայմաններում արձանագրվել են գնային փոփոխություններ՝ թե՛ աճման, թե՛ նվազման միտումով: Այսպես, շինանյութերի, սննդի (ներառյալ ալյուրի և համակցված կերերի), մեքենաշինության, ռադիոէլեկտրոնիկայի, քիմիական, նավթաքիմիական և կենսատեխնոլոգիական արդյունաբերությունում և հրատարակչական գործերի արտադրությունում գրանցվել է 0,3-8,6 գնաճ: Միաժամանակ գների նվազում է արձանագրվել թանկարժեք ու կիսաթանկարժեք իրերի (3,6 տոկոս), էներգետիկայի (2,7), անտառային, փայտամշակման և թղթի-ցելյուլոզի (1,3), թեթև (0,9 տոկոս) արդյունաբերության ճյուղերում, իսկ գունավոր մետալուրգիայի արդյունաբերությունում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

2000թ. փետրվարին նախորդ տարվա փետրվարի համեմատ արդյունաբերական

ձեռնարկությունների թողարկած արտադրանքի գների ինդեքսը կազմել է 105,2 տոկոս:

Բեռնափոխադրումների սակագների ինդեքս*: 2000թ. փետրվարին հունվարի նկատմամբ ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների հավելաճը կազմել է 2,1 տոկոս: Ծառայության այս ոլորտում սակագների ընդհանուր աճը պայմանավորված է խողովակաշարային և երկաթուղային տրանսպորտում արձանագրված սակագների համապատասխանաբար 2,3 և 1,7 տոկոս հավելաճով: Ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագները նվազել են 1,2 տոկոսով, իսկ օդային տրանսպորտում պահպանվել է սակագների նախորդ ամսվա մակարդակը:

2000թ. փետրվարին նախորդ տարվա փետրվարի համեմատ ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագները նվազել են 2,1 տոկոսով:

Գյուղատնտեսական մթերքների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս: 2000թ. փետրվարին նախորդ ամսվա համեմատ գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը կազմել է 96,8 տոկոս, ընդ որում շուկայում և անհատ քաղաքացիներին իրացված գյուղմթերքների գները նվազել են համապատասխանաբար 5,3 և 2,5 տոկոսով, իսկ մթերող կազմակերպություններին իրացված գյուղմթերքների գծով գրանցվել է 3,2 տոկոս գնաճ:

2000թ. փետրվարին հանրապետությունում արձանագրվել է բուսաբուծական մթերքների իրացման գների 8,9 տոկոս նվազում, ինչը պայմանավորված է մրգի (12,7 տոկոս) բանջարեղենի (10,4), մեղրի (5,4), կերային մշակաբույսերի (2,0 տոկոս) իրացման գնաճով: Ընթացիկ ամսում շուկայում և անհատ քաղաքացիներին իրացված բուսաբուծական մթերքների գները նվազել են համապատասխանաբար 10,4 և 8,4 տոկոսով, իսկ մթերող կազմակերպությունների գծով պահպանվել է իրացման գների նախորդ ամսվա մակարդակը:

Հանրապետության դիտարկված մարզերից 8-ում 2000թ. փետրվարին հունվարի համեմատ բուսաբուծական մթերքների իրացման գները նվազել են 21,2-1,9 տոկոսով (նվազման համեմատաբար բարձր տոկոս արձանագրվել է Արարատի մարզում), իսկ Սյունիքում և Լոռիում համապատասխանաբար 14,0 և 2,5 տոկոս գնաճ:

Անասնապահական մթերքների իրացման գների ընդհանուր մակարդակը 2000թ. փետրվարին հունվարի համեմատ աճել է 0,7 տոկոսով, ընդ որում իրացման բոլոր ուղղություններով նկատվել է գների աճման միտում՝ հավելաճը կազմելով 0,3-10,2 տոկոս: Դրան մեծապես նպաստել է կաթնամթերքի (1,7 տոկոս), մսամթերքի (0,3 տոկոս), կաշվեհումքի (9,3 տոկոս) ապրանքախմբերում արձանագրված իրացման գնաճը: Ձվի իրացման գինը նվազել է 1,5 տոկոսով, իսկ բրդի իրացման գինը մնացել է նախորդ ամսվա մակարդակին:

2000թ. փետրվարին նախորդ ամսվա համեմատ հանրապետության հետազոտված մարզերից 6-ում արձանագրվել է անասնապահական մթերքների իրացման գների 7,3-1,2 տոկոս նվազում (նվազման համեմատաբար բարձր տոկոս գրանցվել է Լոռիում), իսկ մյուս 4-ում՝ 0,3-1,3 տոկոս գնաճ:

2000թ. փետրվարին՝ 1999թ. փետրվարի նկատմամբ գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը կազմել է 90,6 տոկոս, այդ թվում բուսաբուծությանը՝ 80,8, անասնապահությանը՝ 97,9 տոկոս:

* 2000թ. հունվարից ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների ինդեքսի հաշվարկը կատարվում է տրանսպորտի 4 տեսակներով: Երկաթուղային, ավտոմոբիլային, օդային բեռնափոխադրումներից բացի բեռնափոխադրումների սակագների ինդեքսի հաշվարկման համար դիտարկվում է նաև խողովակաշարային բեռնառաքումների սակագները:

Գյուղատնտեսական մթերքների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում՝ ըստ մարզերի, 2000թ. փետրվարին

(տոկոսներով)

	Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը		Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը	
	2000թ. փետրվարին		2000թ. փետրվարին	
	1999 թվականի		1999 թվականի	
	դեկտեմբերի նկատմամբ	փետրվարի նկատմամբ	դեկտեմբերի նկատմամբ	փետրվարի նկատմամբ
<i>ԳՀ, ընդամենը</i>	96.3	90.6	99.1	94.4
այդ թվում՝				
Արագածոտն	94.3	83.8	101.4	94.8
Արարատ	94.3	91.6	100.9	87.5
Արմավիր	100.3	94.9	98.5	96.0
Գեղարքունիք	98.5	87.6	100.8	101.5
Լոռի	98.6	98.1	104.8	98.8
Կոտայք	92.0	93.1	99.2	91.4
Շիրակ	100.5	96.6	99.9	97.1
Սյունիք	105.4	94.9	101.4	96.7
Վայոց Ձոր	95.2	94.2	100.8	99.2
Տավուշ	98.1	101.1	91.8	80.4

2000թ. փետրվարին նախորդ ամսվա նկատմամբ գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների 0,5 տոկոս նվազումը հիմնականում պայմանավորված է պարարտանյութերի (8,3 տոկոս), անասունների (6,4), անասնակերի (3,0), գյուղատնտեսական մանր գործիքների (0,8), էներգիայի ու քսայուղերի (0,3), մեքենա-սարքավորումների և դրանց պահեստամասերի (0,1 տոկոս) գնման գների նվազմամբ: Միաժամանակ 4,0-51,8 տոկոս գնման գնաճ է արձանագրվել սերմացուների ու տնկիների, բույսերի պաշտպանության միջոցների և գյուղատնտեսության վճարովի ծառայությունների ապրանքախմբերում, իսկ շինանյութերի գնման գները մնացել են նախորդ ամսվա մակարդակին:

2000թ. փետրվարին նախորդ ամսվա նկատմամբ, հանրապետության դիտարկված մարզերից 7-ում արձանագրվել է գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների 6,4-0,1 տոկոս նվազում, իսկ մյուս 3-ում՝ 0,5-2,0 տոկոս գնաճ:

2000թ. փետրվարին նախորդ տարվա փետրվարի նկատմամբ գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը կազմել է 94,4 տոկոս: